ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merzdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2021 թվականի N132

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետի առաջին մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն Գայանե Սարգսյանի 2021 թվականի օգոստոսի 18-ի դիմումը, **որոշում եմ.**

1. ՀՀ Արմավիրի մարզի Մերձավանի համայնքապետարանի 2021 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Վարչական սարքավորումներ>> հոդվածով նախատեսված գումարից 2021 թվականի հոկտեմբերի 6-ին ձեռք բերված 160 000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ արժողության խոհանոցային սեղանը և 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ արժողության սեղանածածկը նվիրել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ:

2. Օրենքով սահմանված կարգով Մերձավանի համայնքապետարանի՝ ի դեմս համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանի և <<Մերձավանի մանկապարտզ>> ՀՈԱԿ՝ ի դեմս տնօրեն Գայանե Սարգսյանի միջև կնքել նվիրատվության պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 11
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2021 թվականի N133

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը, համաձայն 2021 թվականի հոկտեմբերի 13-ին ԱՁ <<Կարեն Մաչանյան>>-ի /որակավորման վկայական 0244/ կողմից տրամադրված հողամասի և շինությունների բաժանման հատակագծերի և 2021 թվականի հոկտեմբերի 14-ին **Լևոն Հրաչիկի Բարսեղյանի** դիմումի, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Երիտասարդության փողոց թիվ 29 հասցեում գտնվող քաղաքացիներ **Վազգանուշ Վարդանի Բարսեղյանին**, **Լևոն Հրաչիկի Բարսեղյանին և Արծրունի Հրաչիկի Բարսեղյանին** համասեփականության իրավունքով պատկանող 652,0 քառակուսի մետր հողամասից /կադաստրային ծածկագիր 04-065-0054-0020/ առանձնացվող 327,0 քառակուսի մետր հողամասին՝ /Առանձնացվող հատված 2/ ըստ հողամասի բաժանման հատակագծի, տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան **Երիտասարդության փողոց թիվ 29/1**:

Նույն հողամասից առանձնացվող մյուս՝ 322,0 քառակուսի մետր հողամասին /Առանձնացվող հատված 1/ թողնել Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան **Երիտասարդության փողոց թիվ 29**:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 14
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2021 թվականի N134

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 18-րդ կետի պահանջը, **որոշում եմ.**

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների քարոզչական պաստառները փակցնելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Երևանյան խճուղու N15, N57, N63 և N65 բազմաբնակարան շենքերի պատերին՝ տրամադրված 3-4 քառակուսի մետր մակերեսների վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 15

հ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2021 թվականի N135

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, **որոշում եմ.**

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունների համար նախապատրաստման և անցկացման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքում սահմանել երկու տեղամասային կենտրոններ՝

1) առաջին ընտրական տեղամասային կենտրոն սահմանել <<Մերձավանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ շենքը՝ հասցեն Մասիսի փողոց N4.

2) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել <<Մերձավանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ տնօրեն Զարուհի Ստեփանյանին /հեռ. 093-09-67-78/.

3) երկրորդ ընտրական տեղամասային կենտրոն սահմանել <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ շենքը՝ հասցեն Երիտասարդության փողոց N39.

4) տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ տնօրեն Ալվարդ Խուրշուդյանին /հեռ. 095-09-05-65/:

2. Հաստատել Արմավիրի մարզի Մերձավան համայնքի Մասիսի փողոց N4 և Երիտասարդության փողոց N39 հասցեներում գտնվող ընտրական տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների բնութագրերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքները տիրապետողներին:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ղեկավար Լևոն Գրիգորյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 15

համայնք Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 15-ի
N 135 որոշման

Մասիսի փողոց N4 հասցեում գտնվող ընտրական տեղամասային կենտրոնի բնութագիր

Սանհանգույցի առկայություն	Այո
Թեքահարթակի առկայություն	Այո
Տեղամասային կենտրոնի /քվեարկության սենյակի/ մակերեսը	53 քմ
Քվեարկության սենյակի գտնվելու հարկը	1-ին
Առանց պատուհանի պատի առկայությունը	Այո
Տեղամասային կենտրոնի մուտքի դռան լայնությունը	150սմ
Քվեարկության սենյակում արհեստական լուսավորության առկայություն	Այո
Ջեռուցման առկայություն կամ հնարավորություն	Կենտրոնացված ջեռուցում
Օդափոխության հնարավորություն	Այո

Երիտասարդության փողոց N39 հասցեում գտնվող ընտրական տեղամասային կենտրոնի բնութագիր

Սանհանգույցի առկայություն	Այո
Թեքահարթակի առկայություն	Այո
Տեղամասային կենտրոնի /քվեարկության սենյակի/ մակերեսը	143 քմ
Քվեարկության սենյակի գտնվելու հարկը	1-ին
Առանց պատուհանի պատի առկայությունը	Այո
Տեղամասային կենտրոնի 2 մուտքերի դռների լայնությունները	160սմ, 110սմ
Քվեարկության սենյակում արհեստական լուսավորության առկայություն	Այո
Ջեռուցման առկայություն կամ հնարավորություն	Էլ. սարքավորումներով
Օդափոխության հնարավորություն	Այո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

15 հոկտեմբերի 2021 թվականի N136

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, **որոշում եմ**.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունների համար նախընտրական ժողովների և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրել դահլիճ՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքում այլ դահլիճ չլինելու պատճառով տրամադրվում է <<Մերձավանի մշակույթի տուն>> ՀՈԱԿ դահլիճը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 15

համայնք Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 15-ի
N 136 որոշման

2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունների անցկացման համար համայնքում կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճի վերաբերյալ

Հ/հ	Դահլիճի, շինության անվանումը	Գտնվելու վայրը /հասցեն/	Նստատեղերի թիվը	Տրամադրելու օրերը և ժամերը	Դահլիճը տնօրինող	Այլ նշումներ
1.	<<Մերձավանի մշակույթի տուն >> ՀՈԱԿ	Երիտասարդության փողոց թիվ 39	300	Յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 15:00-ից մինչև 19:00, իսկ ոչ աշխատանքային օրերին՝ ժամը 11:00-ից մինչև 19:00:	Ալվարդ Խուրշուդյան	2021 թվականի դեկտեմբերի 3-ին դահլիճը տրամադրել մինչև ժամը 19:00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 հոկտեմբերի 2021 թ. N137

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՑԱԾ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N21-Ա որոշումը, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի բնակչուհի **Տիրուն Հունանի Վարդանյանին** տրամադրել 100 000 ՀՀ դրամ դրամական օգնություն ամուսնու՝ **Սիմոն Բաբկենի Պողոսյանի** մահվան համար /մահացել է 06.10.2021թ., հիմք մահվան վկայական ԲԱ468042, տրված 18.10.2021թ. ՔԿԱԳ գործակալություն ՔԿԱԳ տարածքային բաժնից/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 20
համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 հոկտեմբերի 2021 թ. N 138

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետով՝ ըստ որի կառույցներն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ ԱՁ <<Ջիվան Հարությունյան>>-ի /որակավորման վկայական 0390/ կողմից 2021 թվականի մարտի 1-ին տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, Ահարոն Հովհաննիսյանի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի դիմումը, **որոշում եմ.**

1. Վերականգնել քաղաքացիներ Սարգիս Հովհաննեսի Հովհաննիսյանի, Ահարոն Հովհաննեսի Հովհաննիսյանի գույքային իրավունքները՝ ճանաչել նրանց սեփականության իրավունքը 0,0708 հեկտար տնամերձ հողամասի և նրա վրա կառուցված 551,0 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շենք-շինությունների նկատմամբ (1965 թվականին կառուցված՝ բնակելի տուն 64,8 քառակուսի մետր, բնակելի տուն 92,1 քառակուսի մետր, բնակելի տուն 27,7 քառակուսի մետր, ծածկ 34,6 քառակուսի մետր, ծածկ 10,0 քառակուսի մետր, 1970 թվականին կառուցած՝ բնակելի տուն 221,1 քառակուսի մետր, բնակելի տուն 23,0 քառակուսի մետր, աստ. հարթակ 14,1

քառակուսի մետր, աստիճան 5,0 քառակուսի մետր, ԲՊ 4,5 քառակուսի մետր, 1990 թվականին կառուցված անասնաշենք 38,4 քառակուսի մետր, թոնրատուն 8,5 քառակուսի մետր, ծածկոց 7,2 քառակուսի մետր):

2. Հողամասին և բնակելի տանը տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ համայնք Մերձավան Սևանի փողոց թիվ 43:

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2021 թվականի հոկտեմբերի 29
համայնք Մերձավան